

Ինչպես հայտնի է, V դ. առաջին կեսին Հայաստանը գտնվում էր ծանր քաղաքական իրավիճակում: Այն կորցրել էր իր պետականությունը: Սաստկանում էր ճնշումը Սասանյան Պարսկաստանի կողմից, որը փորձում էր բռնությամբ Հայաստան ներմուծել գրադաշտական կրոնը: Այս պայմաններում ձևավորվեց հայ ջատագովությունը, որին բնորոշ են թե՛ դասական ջատագովության ընդհանուր հատկանիշները, թե՛ տարբեր գործոններով (քաղաքական, հոգևոր-մշակութային և այլն) պայմանավորված որոշ առանձնահատկություններ: Ինչպես և դասական ջատագովությունը, հայ ջատագովությունը պաշտպանում ու հիմնավորում էր քրիստոնեական ուսմունքի հիմնադրույթները և քննադատում ու ժխտում հեթանոսությունը: Դասական ջատագովությունը հիմնականում ուղղված էր հեթանոսության դեմ ընդհանրապես, իսկ հայ ջատագովությունը, ծագելով այն ժամանակ, երբ դասական ջատագովությունը արդեն անցած շրջան էր, յուրացրեց ու ընդհանրացրեց նրա ամբողջ փորձը և կիրառեց կոնկրետ պատմական ու գաղափարաքաղաքական պայմաններում, հեթանոսության քննադատության ընդհանուր խորքի վրա՝ շեշտը դնելով հեթանոսության կոնկրետ դրսևորումների (հիմնականում գրադաշտականության) քննադատության վրա: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ ձևավորված քաղաքական և մշակութային պայմաններում հայ ջատագովությունը կատարում էր ոչ միայն քրիստոնեական կրոնի պաշտպանության, այլև ազգապահպան գործառնություն:

Այսպիսով, ժամանակաշրջանի հայ տեսական մտքի, այդ թվում՝ հայ մտածողների իրավա-քաղաքական հայացքների, դրանց դեմոստրիացիայի համարժեք ըմբռնումը ենթադրում է դիտել դրանք ազգային կեցության առջև կանգնած խնդիրների և պահանջմունքների համատեքստում:

Հայ առաջին ջատագովների գործունեության քաղաքական շարժառիթների վրա ուշադրություն են դարձրել, ինչպես որոշ գիտնական-եկեղեցականներ, այնպես էլ արդի հետազոտողներ¹: Արդեն առաջին հայ ջատագով Մեսրոպ Մաշտոցի գործունեության և հայացքների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել հետևյալ միտումը՝ օգտագործել մշակութային (այդ թվում՝ կրոնական) գործոնը ազգի առջև կանգնած խնդիրները (այդ թվում՝ քաղաքական) լուծելու համար: Ըստ Մաշտոցի, քրիստոնեությունը ազգի միասնականությունը ապահովող գաղափարախոսությունն է և, միաժամանակ, ուսմունք, որով հայ ժողովուրդը դիմակայում է հարևան հզոր Պարսկաստանի հոգևոր-մշակութային ծավալապաշտությանը: Այս դիքորոշումը զարգացվում է Մաշտոցի շաշկերտ Եզնիկ Կողբացու կողմից:

Եզնիկ Կողբացին (380 – 450) վաղ միջնադարյան հայ մտքի ամենավառ ներկայացուցիչներից է, որը մեծ ազդեցություն է գործել այդ մտքի հետագա զարգացման վրա: Լինելով եկեղեցական պաշտոնյա (եպիսկոպոս)՝ նա ունեցել է իր ակտիվ մասնակցությունը ժամանակաշրջանի կարևոր իրադարձություններին: Կողբացին համարվում է Պարսից Հազկերտ արքայի դիմումին հանրահայտ պատասխանի հեղինակներից մեկը: Նրա հռչակավոր «Եղծ աղանդոց» երկը միջնադարյան հոգևոր մշակույթի փայլուն նմուշներից է:

Բազմաթիվ հետազոտողներ են ուշադրություն դարձրել այն փաստին, որ «Եղծ աղանդոց»-ը սերտորեն առնչվում է այդ ժամանակաշրջանում Հայաստանում տիրող քաղաքական-գաղափարախոսական, կրոնաքաղաքական, մշակութային և այլն մթնոլորտին: Ըստ Եզնիկ Կողբացու, ծանրագույն քաղաքական կացության մեջ հայտնված հայ ազգի հիմնական խնդիրն է պահպանել հոգևոր-մշակութային ինքնությունը: Ինչպես և Մաշտոցը, նա այդ խնդրի լուծման միջոցն է համարում քրիստոնեական գաղափարախոսության հիմնավորումը և նրա դիրքերի ամրապնդումը Հայաստանում: Իսկ դարաշրջանի կոնկրետ պայմաններում այդ հիմնավորումը չէր կարող ընթանալ առանց թշնամու գաղափարախոսության՝ պարսից գրադաշտականության քննադատման և ժխտման:

Իրավաքաղաքական խնդիրները բավականին կարևոր տեղ են զբաղեցնում Եզնիկ Կողբացու ուսմունքում: Դրանք սերտորեն կապված են կրոնա-աստվածաբանական հիմնահարցերի այս կամ այն լուծումների հետ, ինչը բնորոշ է միջնադարյան մտքին: Հայ մտածողը քննարկում է ժամանակաշրջանի տեսական մտքի մի շարք կարևոր հիմնահարցեր, հիմնավորում ընդունելի և քննադատում ու հերքում անընդունելի տեսակետները: Միաժամանակ, այդ ամենից բխում են որոշակի հետևություններ, այդ թվում՝ իրավաքաղաքական բնույթի: Ընդ որում, ինչպես նշվեց, այդ վերջինները և, հետևաբար, կրոնա-աստվածաբանական հիմնահարցերի լուծումները ի վերջո պայմանավորված են ազգային (այդ թվում՝ ազգային-քաղաքական) կեցության պահանջմունքներով: Հետևաբար, Եզնիկ Կողբացու իրավաքաղաքական հայացքները անհրաժեշտ է դիտել կրոնա-աստվածաբանական գաղափարների տեսանկյունից և ազգային կեցության համատեքստում:

Իրավաքաղաքական մտքի պատմության տեսանկյունից նախ և առաջ մեծ հետաքրքրություն է ներկայացնում Եզնիկ Կողբացու հայեցակարգը չարիքի, դրա ակունքների և դրա դեմ պայքարելու անհրաժեշտության վերաբերյալ: Ինչպես գրում է Կ.Միրումյանը, «Եզնիկ Կողբացու ուսմունքում չարի (հանցագործությունների, իրավախախտումների, սպանությունների և այլն) պատճառային հիմքի հարցը հիմնարար նշանակություն ունի»²: Ըստ Եզնիկ Կողբացու, չարիքը արտահայտվում է միջմարդկային հարաբերությունների ոլորտում տարբեր տեսակի հանցագործությունների ձևով:

¹ Տե՛ս, օրինակ, *Օրմանյան Մ.*, Ազգապատում, հատոր Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 325, *Միրումյան Կ.* Կուլտурная самобытность в контексте национального бытия. Ереван, 1994.
² *Միրումյան Կ.*, Հայ քաղաքական մտքի պատմությունից, Երևան, 2002, էջ 100:

Կողբացին հատուկ քննարկման առարկա է դարձնում չարիքի ակունքի հարցը. «որտեղի՞ց են չարությունները, որ տեսնում ենք»: Նա քննադատում է գրադաշտական կրոնա-բարոյագիտական դուալիզմը, ժխտում է չար աստծո գոյությունը: Դրանով իսկ նա ժխտում է չարիքի բացարձակությունը, սուբստանցիոնալությունը: Չարիքը ընդհանրապես աստվածային ծագում չունի. «բարերար արարչից չար բան չի ստեղծված, և չկա որևէ չար բան, որ էությանը չար լինի...»: Ի հաստատումն այս գաղափարի, որ էությանը չար որևէ բան չկա, Եզնիկ Կողբացին տարբեր օրինակներով փորձում է հիմնավորել չարիքի հարաբերական լինելը: Նա ցույց է տալիս, որ միևնույն արարքը տարբեր պայմաններում և տարբեր նպատակներով կատարված կարող է գնահատվել մի դեպքում որպես բարի, իսկ մյուս դեպքում որպես չար. «Եթե մեկը ամառակության մեջ բռնվածին սպանում է՝ պատժելով նրան հանդգնության պատճառով, չար բան չի անում: Իսկ եթե մեկն սպանում է մի անմեղի, որը վճռով հաստատված հանցանք չի գործել, կամ (եթե) բան խլելու, ունեցվածքը հափշտակելու համար է սպանում, չարիք է գործում: Թեև երկուսի գործն էլ նույնն է, բայց նպատակը նույնպիսին չէ»¹: Իր տեսակետը հիմնավորող օրինակներ է նա բերում նաև ամուսնա-ընտանեկան հարաբերությունների, կրոնական պաշտամունքների և այլ ոլորտներից:

Եզնիկ Կողբացին հանգում է այն եզրակացության, որ չարիքի ակունքը մարդն է. «մարդիկ իրավագիտրեն են համարվում չարիքներ առաջ բերողներ, որովհետև իրենք են (այդ) անելու կամ չանելու պատճառը»²: Մարդը հանդիսանում է չարիքի ակունք, քանի որ օժտված է կամքի ազատությամբ («անձնիշխան կամքով»). «կատարվող չարիքները կամածին են և ոչ ի բնե»: Մերոպ Մաշտոցը արդեն դիմել էր կամքի ազատության սկզբունքին աշխարհում առկա չարիքի ակունքը բացահայտելու համար: Ավելին, նրա մոտ արդեն միտում է նկատվում ծառայեցնել այն ազգային-քաղաքական պահանջներին և արդարացնել ազգի պայքարը: Եզնիկ Կողբացին զարգացնում է այս գաղափարը:

Կամքի ազատությունը, ըստ Եզնիկ Կողբացու, մեծագույն բարիք է, որ Աստված տվել է մարդուն, սակայն լինելով թերի և անկատար՝ մարդը այն օգտագործում է ինչպես բարիք, այնպես էլ չարիք գործելու համար. «Աստծո ստեղծած առաջին մարդը ինքնակամություն և ազատականություն է ունեցել, նրանից էլ նույնը իր հաջորդներն են ժառանգել: Եվ այդպես (մարդը) ստանալով ազատականությունը, որ աստծուց իրեն պարգևված մեծ շնորհն է, ծառայում է ում որ ուզում է»³:

Ընդունելով այս դիրքորոշումը՝ Եզնիկ Կողբացին խիստ քննադատության է ենթարկում գոյություն ունեցող ճակատագրապաշտական ուսմունքները, որոնք մարդու գործողությունները նախասահմանված են համարում, քանի որ դրանց պատճառները մարդուց դուրս են գտնվում: Ըստ Կողբացու, նման տեսակետը ժխտում է մարդու պատասխանատվությունը սեփական արարքների համար. «Եվ եթե դեպքերը պիտի կատարվեն ճակատագրի ինչ-որ սահմանումով, (սպա) ո՞չ թագավորները պիտի մահվան հրաման տան, ո՞չ էլ դատավորները պիտի տանջեն ու սպանեն մարդասպանին»⁴: Հայ մտածողը համարում է, որ մարդը, օժտված լինելով ազատ կամքով, ինքն է իր գործողությունների պատճառը, հետևաբար, պատասխանատվություն է կրում դրանց համար և պետք է պատժվի չար արարք, հանցանք կատարելու դեպքում: Մարդը «իրավամբ պատիժ պիտի կրի իր կատարածների դիմաց, որովհետև կամովին է հակվում սովորելու այնպիսի բաներ, որոնցից ցանկացած դեպքում կարող է հեռանալ»⁵: Միայն այս դիրքորոշման դեպքում է արդարացված գոյություն ունեցող արդարադատության, օրենքների, պատիժների և այլն համակարգը. եթե չարիքները «ի բնե են, ինչո՞ւ են թագավորներից սահմանվում ճրենքներ, իշխաններից՝ սաստումներ, դատավորներից՝ պատիժներ, չէ՞ որ չարիքներն արգելելու համար (են դրանք): Այլև եթե չարիքները բնական լինեն, օրենսդիրն օրենքներ չպիտի սահմանի, ոչ էլ իշխանը չարագործին պիտի պատժի ենթարկի: Ինչո՞ւ են պատժում նրան, ով ինքնակամ չար չէ...»⁶:

Իր այս սկզբունքը Եզնիկ Կողբացին կոնկրետ անհատների միջև հարաբերությունների ոլորտից տեղափոխում է մի այլ հարթություն՝ ազգերի, ժողովուրդների, երկրների միջև հարաբերությունների ոլորտը, համարելով, որ դրանց դեմ կատարվող հանցանքները (պատերազմ, ավազակային հարձակում, զավթողականություն) նույնպես պետք է պատժվեն: Կ.Միրումյանը նշում է, որ համաձայն Եզնիկ Կողբացու հայեցակարգի «ոչ միայն մարդը ընդհանրապես (մարդկությունը), այլև յուրաքանչյուր ժողովուրդ, այդ թվում հայ ժողովուրդը, Աստծու կողմից օժտված է կամքի ազատությամբ, ընտրության ազատությամբ, ինքնուրույնության իրավունքով»⁷: Եզնիկ Կողբացին գրում է. «Երբ ավազակախումբը արշավում է երկիրը մարդկանց կողոպտելու և կոտորելու համար, թող գործ չհավաքեն ու իրար ետևից գնդեր չկազմեն՝ երկրից ավազակներին դուրս քշելու համար, այլ թող պատճառաբանեն, թե՛ «երկրի ճակատագիրն է ավազակից կոտորվել, մենք ինչո՞ւ պիտի դեմ գնանք ճակատագրին»: Բայց գորքեր գումարելով և երկրից թշնամուն դուրս վերջելով՝ ցույց են տալիս, որ կոտորածները ճակատագրի ինչ-որ սահմանումով չեն տեղի ունենում, այլ՝ ավազակի բռնությամբ, որը գալով անհազաբար կոտորում է ժողովրդին, զրկում ունեցվածքից»⁸: Ինչպես ամեն մի անհատ ինքն է կերտում իր ճակատագիրը, այնպես էլ յուրաքանչյուր

¹ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, երևան, 1994, էջ 33:

² Նույն տեղում, էջ 25:

³ Նույն տեղում, էջ 35:

⁴ Նույն տեղում, էջ 131

⁵ Նույն տեղում, էջ 43:

⁶ Նույն տեղում էջ 49:

⁷ *Мирумян К.* Права человека / Историко-политический очерк. Ереван, 2002, с. 87.

⁸ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, էջ 133:

ազգ պետք է կերտի իր ճակատագիրը: Այս տեսանկյունից միանգամայն իրավացի է Ս.Արևշատյանը, երբ գրում է, որ «ճակատագրապաշտության դեմ ուղղված Եզնիկի հետևությունները ձեռք են բերում հստակ արտահայտված սոցիալական և քաղաքական հնչողություն, արտահայտելով V դ. կեսերի Հայաստանի վիճակը»¹: Որոշակի հետևություններ անելով կամքի ազատության աստվածաբանական սկզբունքից և տարածելով այն ազգերի (ժողովուրդների, երկրների) հարաբերությունների ոլորտի վրա՝ Եզնիկ կողբացին ըստ էության հիմնավորում և արդարացնում է պարսից զավթողականության դեմ ծավալվող ասպտամբությունը, որպես հայ ազգի իրավունք պաշտպանվել և պատժել չարիք, հանցանք գործողներին:

Եզնիկ կողբացու կողմից առանձնացվող հանցանքների, դրանց բնույթի, ինչպես նաև օրենքների մասին դատողությունների վերլուծությունը թույլ է տալիս որոշակի եզրահանգումներ կատարել: Նա առանձնացնում է հետևյալ տիպի հանցանքներ՝ սպանություն, գողություն, կրոնա-պաշտամունքային և ամուսնա-ընտանեկան բնույթի (անառակություն, պոռնկություն), զերեզմանների պղծում, ավազակային հարձակումներ այլ ազգի, երկրի վրա, լրտեսություն օտար երկրում և այլն: Ինչպես նկատում ենք, առանձնացված հանցանքների մի մասը կարելի է արդի տերմինաբանությամբ բնութագրել որպես իրավական (այդ թվում՝ միջազգային իրավունքի) ոլորտին պատկանող, մյուս մասը՝ բարոյական ոլորտին: Այսինքն՝ իրավական և բարոյական բնույթի հանցանքները սահմանազատված չեն իրարից, ինչը բնական է և պայմանավորված է ժամանակաշրջանի ըմբռնումներով: Խոսքը, նախ և առաջ, «օրենքի» ըմբռնման մասին է, քանի որ չարիքը, հանցանքը «օրենքի» անտեսման, ոտնահարման արդյունք է: «Օրենք» ասելով՝ Եզնիկ կողբացին, ինչպես և միջնադարյան միտքը ընդհանրապես, հասկանում է այն պահանջը, արգելքը, նորմը, որը աստվածային ծագում ունի: Այսինքն՝ «օրենքների» ակունքը Աստվածն է: Այդ «օրենքների» ամբողջությունը կարելի է անվանել «աստվածային իրավունք»: Արդի տերմինաբանությամբ դա «բնական իրավունքն է»: Այսպիսով, հանցանքը այն կանոնների ոտնահարումն է, «որոնք ի բնե սահմանեց աստված»²: Այդ «ի բնե սահմանված» օրենքները տարբեր կոնկրետ դրսևորումներ են գտնում հասարակական հարաբերություններում: Դրանց մի մասը, «սահմանվելով թագավորների կողմից», ամրագրվում է կոնկրետ իրավական փաստաթղթերում: Հենց թագավորն էլ հանդիսանում է դրանց իրականացման երաշխիքը³: Այս դեպքում, «աստվածային իրավունքի» («բնական իրավունքի») սկզբունքները իրենց մարմնավորումն են գտնում «դրական իրավունքի» կոնկրետ նորմերի մեջ: Սակայն «աստվածային իրավունքը», ըստ միջնադարյան մտածողների, մարմնավորվում է ոչ միայն կոնկրետ իրավական նորմերի, այլև բարոյական նորմերի, կրոնական պաշտամունքային պահանջների, ավանդույթների մեջ: Այդ պատճառով է, որ Եզնիկ կողբացին չի տարանջատում իրարից տարբեր բնույթի չարիքները, հանցանքները, դիտելով դրանք բոլորը որպես Աստծո կողմից սահմանված կանոնների խախտում:

Եթե մարդու իրավունքների արդի տեսության տեսանկյունից դիտենք Եզնիկ կողբացու իրավաքաղաքական հայացքները, ապա ինչպես երևում է վերոշարադրյալից, հայ մտածողը հատուկ առանձնացնում է ազատության, ազատ ընտրության իրավունքը որպես մարդու բնական, անօտարելի իրավունք, քանի որ այն տրված է նրան Աստծու կողմից: Հետաքրքիրն այն է, որ ըստ Եզնիկ կողբացու, նման իրավունքով օժտված են նաև մարդկային մեծ խմբերը, այդ թվում՝ ազգերը, ժողովուրդները:

Նշենք նաև, որ Եզնիկ կողբացին տարբեր առիթներով շոշափում է իրավաքաղաքական բնույթի մի շարք այլ խնդիրներ, որոնք մենք հատուկ վերլուծության չենք ենթարկի, այլ պարզապես կրթարկենք դրանցից մի քանիսը: Այսպես, նա անդրադառնում է իշխանության ժառանգական փոխանցման հարցին⁴, հանցագործության սոցիալական արմատներին⁵, իրականացվող պատժի հիմքի և հիմնավորվածության խնդիրներին, պատժի չափի, պատժի և հանցանքի համապատասխանության հարցին⁶, հանցագործներին պատժելու մեխանիզմների խնդիրն և այլն:

Այսպիսով, իրավաքաղաքական խնդրակարգը կարևոր տեղ է զբաղեցնում Եզնիկ կողբացու ուսմունքում: Թեև հայ մտածողի քննարկման հիմնական առարկան կրոնադավանբանական, աստվածաբանական, փիլիսոփայական հիմնահարցերն են, սակայն դրանց լուծումներից նա բխեցնում է իրավաքաղաքական բնույթի կարևոր հետևություններ: Եվ, ինչը առավել կարևորն է, նրա իրավաքաղաքական ըմբռնումները պատասխան էին Հայաստանում տիրող կացությանը և ուղղված էին ազգի առջև ծառայած խնդիրների լուծմանը:

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի
գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների թեկ-
նածու՝ *Նովհաննես Սարգսյան*

¹ *Арешатян С.* Формирование философской науки в Древней Армении (V – VI вв.). Ереван, 1973, с. 96 – 97.

² *Եզնիկ կողբացի*, Եղծ աղանդոց, էջ 67:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 49:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 131:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 67:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 33: